369

1. Դուք գիտե՞ք, թե հիմա ում եմ ես շատ սիրում,
Դուք գիտե՞ք, թե հիմա ում եմ ես աղոթում:
Ես ունեմ Տեր Հիսուս, մեծ Փրկիչ ինձ համար
Եվ հոգով պատրաստ եմ սիրտս տալու Նրան:

Տեր Հիսո՛ւս, Տեր Հիսո՛ւս,
Աղաչում եմ, Փրկի՛չ,
Ինձ էլ ա՛ռ թևիդ տակ,
Խնդրում եմ, ողորմի՛ր:

2. Թողել եմ ես բոլոր աշխարհիկ գործերը,
Իմ առջև բացվել են հոգևոր դռները:
Ով փնտրի՝ կգտնի, թե սրտով ցանկանա,
Թակողին կբացվի, թե հոգով կամենա:

3. Ուր էլ որ մենք լինենք, Տերը մեզ կտեսնի,
Ինչ էլ որ մենք խոսենք, Հիսուսը կլսի,
Իսկ եթե սխալվենք ու շեղվենք Իր ճամփից,
Հավատքով աղոթենք՝ ներում կպարգևի: